

ГАГИК АКОПЯН
СТРУКТУРА ВНЕДРЕНИЯ СТРАХОВАНИЯ
СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО РИСКА

Ключевые слова: *агрострахование, пилотная программа, растениеводство, стихийные бедствия, страховые риски, перестрахование, субсидирование.*

Сельское хозяйство является одной из сфер экономики, которая подвержена прямому воздействию природных сил и подвергается наибольшему риску ущерба от этого влияния. Поэтому во всех развитых странах существуют системы сельскохозяйственного страхования, которые способствуют снижению возможных убытков и потерь.

В этой статье обсуждаются и описываются ключевые особенности системы страхования в нескольких странах с развитым сельским хозяйством, а также цель изучить и найти подходящую систему для РА.

GAGIK HAKOBYAN
INVESTMENT POINTS OF AGRICULTURAL RISK INSURANCE

Key words: *agricultural insurance, pilot program, crop production, natural disasters, insurance risks, reinsurance, subsidies.*

Agriculture is one of the spheres of economy that is affected by the direct impact of natural forces and is exposed to the greatest risk of damage from that influence. Therefore, in all developed countries, there are existing agricultural insurance systems that contribute to the reduction of possible damages and losses.

This article discusses and describes the key peculiarities of the insurance system in several economies with advanced agriculture and aims to explore and find the appropriate system for RA.

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

Կոմերցիա, բակալավրիապ, 2-րդ կուրս

ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ: ՄԱՅՆԻՆԳ

Հիմնաբառեր. *կրիպտարժույթ, մայնինգ, բիթքոյն, սափրոշի, բիթքոյն քեշ, մայնինգ ֆերմա*

Կրիպտարժույթը թվային արժույթի մի տեսակ է, որի ստեղծումը և վերահսկումը հիմնված է գաղտնագրային մեթոդների վրա: Որպես կանոն, կրիպտարժույթի հաշվառումն ապակենտրոնացված է: Ապակենտրոնացված վճարային համակարգի հայեցակարգը Սափրոշի Նականոփոն առաջ է քաշել 2008 թ. հոկտեմբերի 31-ին: Դրա հիմնական սկզբունքներն են՝ բոլոր մասնակիցների գաղտնիությունը, զեղծարարությունից պաշտպանությունը և վերահսկող մարմիններից անկախությունը: 2017 թ. դրանց քանակը գերազանցել է 2000-ը:

Ամեն ինչ սկսվեց 1990-ականներին, երբ մի քանի առցանց խաղային համակարգերը ստեղծեցին սեփական «դրամը» (World of Warcraft): Բայց դա

բավարար չէր, քանի որ «դրամի» օգտագործումը սահմանափակվում էր միայն մեկ կայքով: Դա կրիպտոարժույթի առաջնային հիմքն էր: Առաջին հաջողված կրիպտոարժույթը բիթքոյնն է: Սատոշի Նակամոտո անունով հանդես եկած հեղինակը իր նախագիծը ներկայացրել էր հետազոտական հոդվածի տեսքով: Հոդվածում մեկնաբանվում և դիտարկվում էին թվային նոր արժույթի գործառնական սկզբունքները, առավելությունները, թերություններն ու իրացման կառուցակարգը: 2009 թ. հունվարի 3-ին գործի դրվեցին առաջին բլոկը և առաջին 50 բիթքոյնը: Բիթքոյնը միակը չէ, կան այլ կրիպտոարժույթներ ևս, որոնք հիմնականում նույն սկզբունքով են գործում: Կարևորն այն է, որ կրիպտոարժույթը ճանաչում ստանա, այլապես այն որևէ արժեք չի ունենա:

Ստորև ներկայացված են առավել հայտնի կրիպտոարժույթները:

Աղյուսակ 1

Անվանումը	Շուկայական կապիտալացումը ԱՄՆ դոլարով	Արժեքը՝ արդիաօրվա ԱՄՆ դոլարով
Bitcoin	140.561.578.362	8.361,51
Ethereum	52.040.288.867	535,01
Ripple	25.704.680.012	0,68
Bitcoin Cash	1.620.466.547	965,37
Litcoin	8.635.985.441	155,52
Cardano	4.538.44.513	0,15
Neo	4.274.803.536	64,19
Stellar	4.117.048.708	0,20
Eos	3.555.024.246	4,80
Iota	3.391.999.751	11,22

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ այս ցուցանիշները անընդհատ փոփոխվում են:

Կրիպտոարժույթ ստանալու ընթացքը կոչվում է «մայնինգ»: Ցանկացած մարդ կարող է սկսել որոնել կրիպտոարժույթ, դրա համար անհրաժեշտ է համակարգչի վրա հատուկ ծրագրային ապահովում տեղադրել: Մայնինգը ինչպես սեփական վիրտուալ կրիպտոարժույթ ստանալու, այնպես էլ թողարկելու միջոց է: Ընդ որում՝ միակ միջոցը: Կրիպտոփողերը թողարկում է ոչ թե ինչ-որ կենտրոնական մարմին, այլ բոլոր այն օգտատերերը, որոնք գործարկել են հավելվածը՝ համակարգիչների համապատասխան հզորություն ունենալու պայմանով:

Այդ հավելվածում անընդհատ տեղի է ունենում մաթեմատիկական նույնատիպ խնդիրների լուծում: Յուրաքանչյուր լուծած խնդիր հնարավորություն է տալիս ստեղծել բլոկ: Իսկ հավելվածը, ըստ էության, բաղկացած է հենց բլոկերից: Բլոկի ստեղծման համար մայները ստանում է վճար՝ ցանցի կրիպտոարժույթը: Մայներները կենսունակ նշանակություն ունեն այդ համակարգի համար: Եթե ոչ ոք չգործարկի հավելվածը, ապա չեն լինի նոր բլոկեր, կրիպտոփողերը չեն ավելանա, ինչի հետևանքով հավելվածը «կմահանա»: Ցանցի ստեղծողը կարող է ի սկզբանե նախանշել սահմանը: Օրինակ, բիթքոյնների քանակը չպետք է գերազանցի 21 միլիոնը: Ըստ կանխատեսումների՝ վերջին բիթքոյնը կարդյունահանեն 2033 թ. սկզբին: Այսօր գերակայում է կրիպտոարժույթի արդյունահանումը հզոր վիդեոքարտերի և սալիկների մի-

ջոցով՝ proof-of-work մոդելը: Ով ունի ավելի շատ հզորություններ, նա էլ հաղթում է: Կա նաև մայնինգի մեկ այլ տեսակ՝ proof-of-stake: Որքան շատ կրիպտոփող կա հաշվին, այնքան շատ է բլոկ ստեղծելու հնարավորությունը: Այս սխեման ավելի արդյունավետ է՝ բնապահպանական նկատառումներից ելնելով, և քիչ էլեկտրականություն է ծախսվում: Այսօր այդ ուղղությունը զարգանում է և արդյունքում կարող է փոխարինել proof-of-work համակարգին: Մայնինգի նոր սերունդն արդեն գոյություն ունի: Այն ենթադրում է, որ հզորությունները այլևս որևիցե դեր չեն ունենալու, սակայն կրիպտոարժույթի արդյունահանումը հասանելի կլինի միայն նրանց, ովքեր արդեն ունեն կրիպտոարժույթային կապիտալ:

Դիտարկենք proof-of-work տեխնոլոգիայով մայնինգով զբաղվելու համար անհրաժեշտ նվազագույն հզորությունը: Մայնինգ ֆերմայի ստեղծման համար առաջին հերթին անհրաժեշտ է հենահարթակ (ֆերմայի կմախքը): Հարթակը տնային պայմաններում կարելի է պատրաստել փայտից կամ մետաղյա ձողերից: Վրան առկա են երկու և ավելի վիդեոքարտեր: Վիդեոքարտ օգտագործող հավելվածն ավելի արագ է լուծում մաթեմատիկական խնդիրը, քան դա կարող է անել կենտրոնական պրոցեսորը (մշակիչը):


Որքան հզոր է քարտը, այնքան բարձր է արագությունը: Այսպիսով, դա ավելացնում է մայների հնարավորությունը՝ ստեղծելու բլոկ և վաստակելու կրիպտոարժույթ: Մասնագետները խորհուրդ են տալիս հետևյալ վիդեոքարտերը՝ Nvidia մակնիշի gtx1060, gtx 1070, gtx 1080 կամ AMDreadeon rx570, rx470, rx480: Այս ցուցակը կարող է երկար շարունակվել, քանի որ կան հազարավոր վիդեոքարտի տեսակներ: Ի դեպ, դրանց արժեքը մի քանի անգամ աճել է՝ մայնինգի տարածմանը զուգընթաց: Հայաստանում մայնինգի համար նախատեսված վիդեո քարտը կարելի է գնել՝ 250 հազար դրամից սկսած. դրա արժեքը կարող է հասնել մի քանի հազար դոլարի:

Հաջորդ կարևոր հարցը մայր պլատայի ընտրությունն է, որը կախված է վիդեոքարտերի քանակից: Օպտիմալ տարբերակը 4 հատ վիդեոքարտի համար մեկ մայր պլատա օգտագործելն է: Կարելի է վիդեոքարտերի քանակը հասցնել 6-ի, սակայն այս պարագայում կարող են բարդություններ առաջանալ: Պրոցեսորի հարցում կարելի է խնայել, քանի որ մայնինգով կարելի է զբաղվել նաև էժանագին պրոցեսորով: Օպերատիվ հիշողությունը պետք է լինի 4 ԳԲ և ավելի: Կոշտ սկավառակը կարող է լինել հասարակ HDD, սակայն ցանկալի է SSD: Չափազանց կարևոր է սնուցման բլոկի ընտրությունը, քանի որ դրանից է կախված վիդեոքարտի աշխատանքի անընդհատությունը և տեխնիկական անվտանգությունը: Սնուցման բլոկը պետք է ունենա 80+ և ավելի բարձր հավաստագիր: Չմոռանանք համացանցի մասին: Մայնինգով զբաղվելու համար բավարար է 2-3 մբ/վ արագություն ապահովող կապ:

Սակայն մեծ հզորության ֆերմաները ծախսում են մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա, ուստի անհրաժեշտ է ընտրել օպտիմալ չափը: Օրինակ, բիթքոյնի արդյունահանումը ծախսում է ամբողջ աշխարհում սպառված էլեկտրաէներգիայի 2%-ը: Էներգիայի այսքան ծախսը իրականում արհեստական է և պարտադիր չէ: Դրա շնորհիվ համակարգը ստանում է անվտանգություն և ապահովում է բլոկչեյնի բարձր արժեքը:

Կա մայնինգով զբաղվելու ավելի պարզ տարբերակ ևս՝ առցանց մայնինգ: Առցանց մայնինգը առաջին հերթին կազմակերպության կողմից տրա-

մադրված ծառայություն է, որն արդեն իսկ սարքավորումներ ունի մայնինգով զբաղվելու համար: Դրանք հիմնականում հենց այդ սարքավորումներ արտադրող կազմակերպություններն են կամ դրանց խոշոր ներկրողները: Առցանց մայնինգի առավելությունն այն, որ պետք չէ գնել սարքավորումներ՝ մեծ ներդրումներ կատարելով: Այդ կազմակերպությունները ամսական վճարի դիմաց տրամադրում են արդեն իսկ գործող հարթակ: Որպես թերություն կարելի է նշել այն փաստը, որ ամսավճարը, անկախ կրիպտոարժույթի գնից, հաստատուն է:



Գծապատկեր 1. *Բիթքոյնի արժեքը*

Կրիպտոարժույթի տատանումները առհասարակ մեծ խնդիր են մայնինգով զբաղվողների և դրանցով գնումներ կատարողների համար: Դրանց արժեքը օրվա ընթացքում կարող է մի քանի անգամ կտրուկ փոփոխման ենթարկվել: Օրինակ, 2009 թ. 1 դոլարով կարելի էր ձեռք բերել 1309 բիթքոյն: 2011 թ. 1 բիթքոյնը արժեր 1 դոլար: 2017 թ. դեկտեմբերին 1 բիթքոյնի արժեքը գերազանցեց 20000 դոլարը, բայց դա կարճաժամկետ էր: Այժմ դրա արժեքը տատանվում է 8-9 հազար դոլարի սահմանում¹:

Բիթքոյնի գնի աճին զուգահեռ շրջանառության մեջ մտավ սատոշին. դա բիթքոյնի փոքրագույն արժեքն է: 1 բիթքոյնը համարժեք է 100 միլիոն սատոշի: Դա բիթքոյնին հավելյալ ճկունություն է հաղորդում. այդ եղանակով կարելի է փոխանցել ցանկացած քանակությամբ գումար:


2017 թ. օգոստոսի 1-ից բիթքոյնը բաժանվել է դասական բիթքոյնի (BTC) և Bitcoin Cash-ի (BCC):

Կրիպտոարժույթը չի կարող գոյություն ունենալ առանց առցանց դրամապանակի, այն փոխանցվում է մեկ դրամապանակից մյուսի մեջ: Մարդը միայն այն բիթքոյնի տերն է, որը գտնվում է իր դրամապանակի հաշվի վրա: Ուշագրավ է այն փաստը, որ եթե օգտատերերից մեկը մոռանա դրամապանակի գաղտնաբառը, ապա այն վերականգնելը գրեթե անհնարին կլինի: Կրիպտոարժույթը օգտագործում է բլոկչեյն տեխնոլոգիան, որը նրա գլխավոր առանձնահատկությունն է: Բլոկչեյնը համակարգիչների շղթա է, որոնք

¹ <https://www.fxclub.org>

տեղակայված են ամբողջ աշխարհում և միացված են համացանցին: Կրիպտոարժույթում բլոկչեյնը օգտագործվում է գործարքների համար: Եթե օգտատերը փոխանցում է իր կրիպտոարժույթը, ապա դա պետք է հաստատեն մասնակիցները: Գծապատկեր 2-ում տե՛ս կրիպտոարժույթի՝ մեկ դրամապանակից մյուսին անցումը:¹

Կարելի է եզրակացնել, որ կրիպտոարժույթը, ի հայտ գալով 2009 թ., մեծ տարածում գտավ ամբողջ աշխարհում: 2018-ին կրիպտոարժույթի կապիտալացման մակարդակը կազմեց շուրջ 330 միլիարդ դոլար, որի առյուծի բաժինը պատկանում է բիրթքոյնին:



Գծապատկեր 2

Շատ հեղինակավոր տնտեսագետներ կարծում են, որ կրիպտոարժույթը համաճարակ է. ինչպես արագ զարգացավ, այնպես արագ էլ պետք է ոչնչանա: Այնուամենայնիվ, կրիպտոարժույթը շարունակում է հաստատուն քայլերով առաջ գնալ՝ գրավելով նորանոր շուկաներ: Գուցե հենց կրիպտոարժույթն է փողի էվոլյուցիայի շարունակությունը: Նմանատիպ եզրակացության կարող ենք հանգել՝ ուսումնասիրելով փողի զարգացման պատմությունը: Բարտերային եղանակով ապրանքաշրջանառությունը փոխարինվեց ոսկյա և արծաթյա մետաղադրամներով: Երբ մարդիկ սկսեցին վստահել դրամին, ոսկին և արծաթը փոխարինվեցին հասարակ մետաղադրամներով և թղթադրամներով: Գիտության զարգացման հետ մեկտեղ, զարգացավ նաև ֆինանսական շուկան: Ստեղծվեցին բանկային հաշիվներ, պլաստիկ քարտեր, փողը թվայնացվեց: Աշխարհում միլիոնավոր գործարքներ կատարվեցին առանց փողի ֆիզիկական տեղաշարժի: Եվ ահա զարգացման տրամաբանական շարունակությունը կարող է լինել կրիպտոարժույթը:

¹ <https://prostocoin.com>

Վերոնշյալ դիտարկումներից ելնելով՝ առաջարկվում է ստեղծել կրիպտոարժույթի մի նոր տեսակ, որը սկզբունքորեն կտարբերվի գոյություն ունեցողներից, որոշակի կախվածություն կունենա միջազգային ֆինանսական կառույցներից:

Անհրաժեշտ է նաև կրիպտոարժույթի վերահսկման լծակներ ստեղծել, օրենսդրորեն կարգավորել մայնինգը՝ որպես ձեռնարկատիրական գործունեության տարր:

Նման մոտեցումը, կարծում ենք, կապահովի կրիպտոարժույթի կայունությունը և զարգացումը: Այն ավելի հուսալի կդառնա:

ДАВИД АКОПЯН КРИПТОВАЛЮТА И ЕЕ ВИДЫ. МАЙНИНГ

Ключевые слова: криптовалюта, майнинг, биткойны, сатоши, биткоин кэш, майнинг ферма.

Криптовалюта это своего рода цифровая валюта, создание и контроль которой основаны на криптографических методах. Как правило, криптовалютный расчет децентрализуется. Концепция децентрализованной платежной системы представил Накамото в 2008 году 31 октября. Его основными принципами являются конфиденциальность всех участников, защита от мошенничества и независимости от контролирующих органов. В 2017 году их число превысило 2000.

DAVID HAKOBYAN CRYPTOCURRENCY AND ITS TYPES. MINING

Key words: cryptocurrency, mining, bitcoins, satoshi, bitcoin cache, mining farm.

Crypto is a kind of digital currency, the creation and control of which is based on cryptographic methods. As a rule, the crypto-currency calculation is decentralized. The concept of decentralized payment system Nakamoto has dropped in 2008 October 31. Its main principles are the confidentiality of all participants, protection against fraud and independence from controlling bodies. In 2017 their number exceeded 2000.

ԿԼԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Կառավարում ըստ ոլորտների,
բակալավորիար, 2-րդ կուրս

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. աղքատություն, գործազրկություն, եկամույրներ, պեություն

Հոդվածում ներկայացված են աղքատությունը, դրա տեսակները, ցուցանիշները, ազդող գործոնները ու չափման մեթոդները, ինչպես նաև վերլուծություններ և աղքատության մակարդակը կրճատելու վերաբերյալ լուծումներ:

Գլոբալ և արդիական այս խնդիրը հոդվածում ներկայացված է Հայաստանի Հանրապետության օրինակով: Հայաստանում, ըստ Ազգային վիճակագրական ծառայության, աղքատ է բնակչության ավելի քան 29,4%-ը (ըստ 2016 թ. տվյալների), և աղքատության խնդրի լուծումը առաջնային նպատակներից է: